

Արձանագրություն թիվ 1

ԵՊՀ-ի ղեղազիտության և քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2015թ սեպտեմբերի 8-ին

օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2015-16 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները կուրատորների աշխատանքային ծրագրերի վերաբերյալ:
3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղուչիկյան.

- Ներկայացնում այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի խորհրդի 2015-2016 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագիծը բաժանված էր ամբիոնի վարիչներին, մանրամասն ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու համար: Ամբիոնների վարիչները կատարել են իրենց առաջարկությունները: Դեկանատի անդամները կստանան ֆակուլտետի խորհրդի 2015-2016 ուս. տարվա աշխատանքային նորացված պլանը: Առաջարկում եմ հաստատել ֆակուլտետի խորհրդի 2014-2015 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Խորհուրդը քվեարկությամբ միաձայն հաստատեց ֆակուլտետի խորհրդի 2015-2016 ուս. տարվա աշխատանքային պլանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սեպտեմբեր

4. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2015-16 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
5. Ամբիոնների վարիչների հաղորդումները կուրատորների աշխատանքային ծրագրերի վերաբերյալ:
6. Ընթացիկ հարցեր:

Հոկտեմբեր

1. Պետական քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում:
2. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաղորդումը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին :
4. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

1. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:
2. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
3. Մանկավարժական և ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Հունվար

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Փետրվար

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Ընթացիկ հարցեր:

Մարտ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

1. Ֆակուլտետի ՈւԽ նախագհի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Դեղագիտության և օրգանական քիմիայի ամբիոնների վարիչների հաշվետվության լուսմները 2015-16 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
4. Կուրսային աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

Մայիս

1. Ֆիզիկական քիմիայի, անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնների վարիչների հաշվետվության լուսմները 2015-16 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագհի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Հունիս

1. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
 2. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
 3. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
 4. Ընթացիկ հարցեր:
2. Լսեցին - ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետից ԵՊՀ գիտական խորհրդի անդամության թեկնածուների ընտրության հարցը:
- Արտահայտվեցին – պրոֆեսորներ Ռ.Ս.Հարությունյանը, Գ.Պ. Փիրումյանը, Տ. Վ. Ղոչիկյանը, դոցենտներ Ս.Ս.Վարդապետյանը, Ռ.Պ.մխիթարյանը որոնք առաջարկեցին ԵՊՀ գիտական խորհրդի անդամության թեկնածուներ՝ ֆակուլտետի դեկան քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանին և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Ս Մաղյանին: Այլ առաջարկներ չեղան:

Որոշեցին – Խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց առաջարկել ֆակուլտետի դեկան քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյանին և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ.պրոֆեսոր Ա.Ս Սադյանին ԵՊՀ գիտական խորհրդի անդամության թեկնածուներ:

3. Լսեցին - Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - ա/ Ուսման գերազանցիկ «Դեղագործական քիմիա» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Արարատի Սարգսյանին ներկայացնել Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

բ/ Շարունակել « քիմիա» բաժնի 4-րդ կուրսի ուսանող Արեն Յուրիկի Ամիրբեկյանի Ստեփան Ղամբարյանի անվան կրթաթոշակը:

գ/ Շարունակել « դեղագիտություն» մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Արթուրի Չախոյանի Աիդա Ավետիսյանի անվան կրթաթոշակը:

ֆակուլտետի գիտական

խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա.Ի.Մարտիրյան